ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արաքս /Էջմ./ համայնքի ղեկավարի 2011թ. առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Հարգելի համայնքի բնակիչներ և Պարոն Այվազյան, թույլ տվեք Ձեր ուշադրությանը ներկայացնել Արաքս համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2011թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը առաջին կիսամյակում կատարված աշխատանքների և միջոցառումների ամփոփիչ տեղեկատվությունը:

Արաքսի գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: Մեր համայնքը ունի 412 տնտեսություն, բնակչությունը 1889 մարդ, մոտ 1200 ընտրող, 1200 հա հողատարածություն: Գարնանը մշակվել է շուրջ 30,0 հա հողատարածքներ, շուրջ 90,0հա-ով պակաս անցյալ տարվա համեմատությամբ, ոռոգման ջրի սակավության պատճառով: Գյուղում մշակվում են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ:

Ըստ բնագավառների կատարվել են

Ֆինանսական բնագավառում

Կազմակերպվել է և շարունակվում է հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները, համայնքը աշխատավարձի և սոց. ապահովության ֆոնդին պարտքեր չունի:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարված աշխատանքների բնագավառում

Կազմակերպվել է ֆուտբոլի մրցումներ հարևան համայնքների հետ:
Կազմակերպվել են սպորտային միջոցառումներ կոնտակտ-կարատե մարզաձևից:
Գարեգին Նժդեհի 125 ամյակի կապակցությամբ կատարվել է միջոցառում:
Հաճախակի երիտասարդության հետ կատարվում է միջոցառումներ թմրամոլության դեմ պայքարի վերաբերյալ:
Վերջերս մշակույթի տանը բացվել է պարի խմբակ:

Պաշտպանության բնագավառում

Կազմակերպվել է զինապարտների հաշվառման նրանց բուժզննման և զորահավաքի աշխատանքները:

Սոցիալական ծառայության բնագավառում

Աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին: Թվով տաս անապահով ընտանիքների տրվել են դրամական օգնություն ընդհանուր 530 հազար դրամի չափով:

Կոմունալ ծառայության բնագավառում

Կազմակերպվել է և կատարվում է ամենօրյա աղբահանում:

Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել է ցորենի և կորեկի բերքահավաքի աշխատանքները և նախապատրաստական աշխատանքներ են ձեռնարկվել աշնանացանը ժամանակին և պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

Շինարարության բնագավառում

Կառուցվել և վերանորոգվել են գերեզմանատան պարիսպները, վերանորոգվել են ներհամայնքային ճանապարհները:

Համայնքի հիմնախնդիրներ

Համայնքի հիմնախնդիրները, այսօր էլ մնում են

1. Համայնքի գազաֆիկացումը,
2. Ճանապարհների վերանորոգումը,
3. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը,
4. Մշակույթի տան վերանորոգումը,
5. Ոռոգման ցանցի կառուցումը.
6. Ոռոգման ջրի սակավությունը:

Արաքս համայնքի ղեկավար՝ / Ա. Միքաելյան